որ կամէինք ներարկել բարեմիտ հասարակութեան խղճին և վճռին։

Մենք հոգով ցաւում ենք այս տողերը գրելով և բոլորովին հակառակ ենք որ և է հրապարակական ցոյցերի և բացայայտութիւնների, բայց քանի որ ոտի տակ են առնում ամբողջ հայ ուսանողութեան պատիւը, քանի որ երկպառակութեան սերմեր են ցանում ժողովրդի մէջ, քանի որ ճեղքումըն և պատառուածն են կամենում բաց անել ուսանողութեան և հասարակութեան մէջ—մենք լռել կարող չենք—մենք բողոքում ենք։

Կարծում ենք, որ պարզաբանելու կարիք չը կայ, եթէ ասենք, որ ամենաաստիկ և ամենածանր յանցանքը—բարոյական յանցանքն է. նա մահացու մեղք է. Գ. Մելիքզադէն մահացու մեղք է գործել հասարակութեան դէմ, հրատարակելով այնպիսի անխիղճ զրպարտութիւններ և անհիմն ամբաստանութիւններ նոյն իսկ հասարակութեան մի ամբողջ դասակարգի (ուսանողութեան) վրա, մահացու մեղք—գիտութեան (լաւ է կրիտիկայի) դէմ, իր բանդագուշանքներով և բորբոքուած ուղեղի հրէշաւոր վիժումներով և մահացու մեղք—ամբողջ ուսանողութեան դասի դէմ ձգնելով վայր ձգել նորա վարկը և պատիւը հասարակութեան առաջ և ոտնակոխ անելով բոլոր նորա բարձր ձգտումները, ապագայի յոյսերը և ազնիւ նպատակները….

Մենք բոլորովին աւելորդ ենք համարում երկար ու բարակ քննութեան ենթարկել պ. Մելիքզադէի յօդուածը ուսանողութեան մասին և կէտ առ կէտ պատասխանել նորա բանսարկութիւններին—մի յօդուած, որի հեղինակը ոչ ուսանող է եղած, ոչ ուսանողական շրջաններում ապրած, ապա ուրեմն անծանօթ և ուսանողութեան կեանքին և ուսանողութեան ձգտումներին և բոլորովին մերկ ու բոպիկ հիմնաւոր գիտութիւնից և կրթութիւնից։

Մեր հասարակութեան մէջ կան բանիմաց և լուսաւորեալ անձինք, որոնց քաջ ծանօթ է թէ ուսանողութիւնը և թէ պ. Մելիքզադէ. դրանց իսկ բարեխիղճ վճռին յանձնում ենք մենք մեր դատը. պ. Մելիքզադէի հետ մենք ոչինչ հաշիւ և համար չունենք։

Կը յուսանք, որ հրատարակելով այս երկու տողը, մենք բարոյապէս համերաշխ և համամիտ ենք Ռուսաստանի միւս հայ ուսանողների հետ։

Ընդունեցէք, պ. խմբագիր, մեր յարգանաց խորին հաւատքը դէպի ձեզ։

Հայ ուսանողներ, Գրիգորիս Խզրաշեան, Հմբ. Առաքելեան, Գր. Խալաթեանց, Յ. Տէր-Մովսէսեանց, Ա. Տէր-Թովմասեանց, Մ. Միհրանջեան, Բէկ-Յովսէփեանց, Միքայէլ Լազարեանց, Ս. Ենիկոլոփեանց, Յ. Տէր-Բարսեղեանց, Ա. Քալանթար, Ն. Փիրումեանց, Խ. Բունեաթեան, Յ. Աֆրիկեանց, Վ. Քիրզիեանց, Գ. Շահիկեանց, Շ. Մելիք-Փարսադանեանց, Ա. Գուլիջանեանց, Ջ. Անդրիասեան, Խ. Լիսիցեանց։

ՆԱՄԱԿ ՄՕԶԴՕԿԻՑ

Մարտի 4 ին

Մօզդօկի ծխական եկեղեցական օրիորդաց և տղայոց-դպրոցների սաներս և սանուհիներս հանգանակութիւն բացինք մեր մէջ յօգուտ Վանի սովատանջների և մեզանից ամեն մինը իր լուման գցեց այդ խեղճ սովածների գանձանակը, որից գոյացաւ 18 րուբլ դրամ։

Նուէրները թէև շատ փոքր են սովածների այսքան մեծ բազմութիւնը աչքի առաջ ունենալով, բայց այս փոքրն էլ թող լինի մեր մատաղ սրտերի դէպի մեր հեռաւոր թշուառ ու կարօտեալ քոյրերը ու եղբայրները ունեցած զգացման ճշմարիտ արտայայտիչը։ Այդ զգացմունքը գուցէ օր աւուր զօրանալով մեր սրտերում, մի օր, աջող հանգամանքների մէջ աւելի զօրեղ կերպով կարողանանք ցոյց տալ այդ մեր սիրելի եղբայրներին և քոյրերին։ Ցանկալի էր որ հայոց միւս դպրոցների աշակերտները և աշակերտուհիները մեր եղբայրները և քոյրերը ևս գոնեա այս բանում օրինակ առնելով մեզանից, իրանք էլ չուշանային գցել իրանց կոպէկները այդ գանձանակը։

Նուիրատու օրիորդաց ազգանունները. Քօլուբաշեանց Գայանէ 1 րուբլ, Մ. Քօլուբաշեանց 1 ր., Մ. Լիսիցեանց 1 ր., Ս. Օթարեանց 50 կ., Լ. Օթարեանց 50 կ., Ա. Եարալեանց 20 կ., Ա. Գրիգորեանց 20 կ., Ա. Երեցփոխեանց 20 կ., Ո. Խրջեանց 20 կ., Ս. Ջուրաբեանց 15 կ., Վ. Համբարձումեանց 15 կ., Հ. Գասպարեանց 12 կ., Ս. Գրիգորեանց 10 կ., Վ. Ալամազեանց 10 կ., Վ. Ներսիսեանց 10 կ., Մ. Օթարեանց 10 կ., Վ. Սահակեանց 7 կ., Ս. Մարտինեանց 15 կ., Վ. Թեմիրխանեանց 5 կ., Վ. Թումանեանց 5 կ., Մ. Նազարեանց 5 կ., Ն. Վարդանեանց 5 կ., Մ. Ալամազեանց 5 կ., Մ. Աթաբէկեանց 5 կ., Մ. Աթարկցեանց 5 կ., Ո. Երուսաղէմեանց 5 կ., Վ. Մելիքեանց 5 կ., Ե. Ջալեանց 5 կ., Յ. Ռոստոմեանց 5 կ., Վ. Ալամազեանց 5 կ.։ Նուիրատու տղայոց անունները. Ս. Քօլուբաշեանց 1 ր., Բ. Գանջումեանց 1 ր., Ն. Գանջումեանց 1 ր., Պ. Ուլուխանեանց 1 ր., Յ. Ալիխանեանց 1 ր., Մ. Խլխանեանց 60 կ., Գ. Ալազուլեանց 50 կ., Ն. Սկանդարեանց 40 կ., Ա. Յակոբջանեանց 40 կ., Յ. Ռոստոմեանց 30 կ., Ս. Արէխեանց 50 կ., Ն. Լալայեանց 45 կ., Մ. Մովսէսեանց 20 կ., Գ. Գալստեանց 20 կ., Գ. Բաղդասարեանց 20 կ., Բ. Լալայեանց 20 կ., Գ. Սերեբրակեանց 20 կ., Գ. Պապեանց 20 կ., Գ. Մխիթարեանց 20 կ., Յ. Մովսէսեանց 20 կ., Ս. Ռոստոմեանց 25 կ., Կ. Պապաեանց 15 կ., Գ. Գաւթեանց 15 կ., Ս. Բարխեանց 10 կ., Բ. Բէգլիզարդեանց 10 կ., Գ. Մեհտեանց 10 կ., Գ. Շահինեանց 10 կ., Յ. Օթարեանց 10 կ., Ա. Խօջայեանց 10 կ., Կ. Դանիէլեանց 10 կ., Ա. Խանդամեանց 5 կ., Ա. Եազուբեանց 5 կ., Ս. Աթարկցեանց 5 կ., Յ. Ցիրլեանց 5 կ., Կ. Կարակաշեանց 5 կ., Կ. Օթարեանց 5 կ., Ն. Եարալեանց 5 կ., Պ. Պապեանց 5 կ., Գ. Խալաթեանց 5 կ., Կ. Խօջայեանց 5 կ., Թ. Կամենեվեկեանց 5 կ., Պ. Ռոստոմեանց 3 կ., Տ. Ցիբիլեանց 8 կ.։ Բոլոր գումարն է 18 ր.։

Մօզդօկի ծխական դպրոցների աշակերտները և աշակերտուհիները։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, ապրիլ 5

Վանի սովատանջների համար ժողովեցի 209 ր. 5 կ., որ ահա ներկայացնում եմ ձեզ, նուիրատուների ցուցակի հետ միասին։

Գաբրիէլ Ախվերդեան 10 ր., Նիկօլա Ախվերդեան 10 ր., Միքայէլ Արամեանց 10 ր., Միքայէլ Խուբլարեանց 10 ր., Միքայէլ Կեանջիցեանց 20 ր., Միքայէլ Միրզայեանց 10 ր., Գէորգ Մկրտումեան 10 ր., Յարութիւն Բարսամեան 10 ր., Մի հայ 10 ր., Մելքսեթ Մելիք-Բէշմիրեան 5 ր., Անյայտ 5 ր., Պաւլէ Գուրգենեան 5 ր., Յովհաննէս Աղամալեան 5 ր., Գէորգ Տէր-Դաւթեան 4 ր. 50 կ., Պէտրէ Կուզանեան 4 ր., Եդուարդ Ղազանճեան 4 ր., Յարութիւն Խանկեալդիեանց 3 ր., Ստեփան Նիկողոսեան 3 ր., Բաղդան Արուչանեանց 3 ր., Արտէմ Գասպարեանց 3 ր., Ալէքսանդր Քալանթարեանց (ագուլեցի) 3 ր., Աստուր Տէր-Յակոբեանց 3 ր., Սարգիս և Լևոն 2 ր., Գրիգոր Ստեփանեան 2 ր., Մկրտիչ Անանեանց 2 ր., Ախալցխացի 2 ր., Գրիգոր Տէր-Յովհաննէսեան 2 ր., Զաքար Խարատեանց 2 ր., Յակոբ Կուզանեանց 1 ր. 50 կ., Իւան Լազարեանց 1 ր. 5 կ., Կանջում Կանջումեան 1 ր., Սահակ Մանուկեանց 1 ր., Անյայտ 1 ր., Անյայտ 1 ր., Բէբինեանց 1 ր., Ստեփան Ալլահվերդեան 1 ր., Եղիշէ Զարդեզեան 1 ր., Ստեփանոս Թումանեան 1 ր., Կարապետ Մատինեան 1 ր., Մատթէոս Աղայեան 1 ր., Ադամ Սարգարեան 1 ր., Անյայտ 1 ր., Ստեփան Սափրազեանց 1 ր., Պօղոս Սահակեանց 1 ր., Տէր-Մուրադեանց 1 ր., Ալէքսանդր Մարտիրոսեանց 1 ր., Յովհաննէս Շահմուրադեանց 1 ր., Անյայտ 1 ր., Ստեփան Իզմիրեանց 1 ր., Ալէքսանդր Ալօեանց 1 ր., Մարտիրոս Թումանեան 1 ր., Արտէմ Սեանեան 1 ր., Յովհաննէս Վաչեանց 1 ր., Սիմէօն Պետրոսեանց 1 ր., Ստեփան Աթօյեանց 1 ր., Буткевичъ 1 р., Գ. Տէր-Օհանեանց 1 ր., Յարութիւն Էլիբէկեանց 1 ր., Մի ագուլեցի 1 ր., Կուլիջանեանց 1 ր., Աղէքսանդր Եսայեան 1 ր., Յոլակ 1 ր., Լևոն Խօջայեանց 1 ր., Ս. Մինասեանց 1 ր., Գ. Մեհրաբեանց 1 ր., Ա. Սուսանեանց 1 ր., Արտէմ Մարտիրոսեանց 1 ր., Յովսէփ Խարատեան 1 ր., Դաւիթ Բարսեղով 1 ր., Տիգրան Մանդինեան 1 ր., Նիկօլա Տէր-Օհաննէսեան 1 ր., Ալէքսանդր Ակօբեան 1 ր., Յովսէփ Շևխեան 1 ր., Միխակ Գօլմազով և Գ. Կոպաձէ 1 ր.։

Գումարը 209 ր. 5 կ.։

Ընդամենը երկու հարիւր ինն ր. 5 կ., որը ցուցակիս հետ յանձնելով խմբագրութեանդ նուիրատուաց անունները տպագրել և փողը իր նպատակին հասցնել կը խնդրեմ։

Յ. Աղամալեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 3 ապրիլի

Հաւաքեցի յօգուտ Վասպուրականի հայ սովատանջների 78 րուբլ, որ և յանձնում եմ ձեզ նուիրատուների ցուցակի հետ միասին, ուր հարկն է այդ գումարը հասցնելու համար.

Նուիրատուները սրանք են։

Գրիգոր Մանուկեան 1 ր., Գրիգոր Խատամանեանց 5 ր., Աղէքսանդր Սուսանեանց 3 ր., Միխակ Փարսադանեանց 1 ր., Յակովբ Փիրալեանց 3 ր., Արտէմ Վարձիգուլեանց 4 ր., Արտէմ Բէգլարեան 3 ր., Александръ Пораковъ 5 р., Գրիգոր Բայնդուրեան 5 ր., Ե. Գուլիջանով 2 ր., Գ. Հունուտկեանց 3 ր., Աղ. Շահինարեան 3 ր., Միխակ Սահակեան 1 ր., Յով. Սէմէրեան 2 ր., Միխակ 1 ր., Գէորգ Խատամանեան 10 ր., Սիմէօն Սիրունեան 2 ր., Արշակ Սաղաթելեան (ախալցխացի) 3 ր., Захарія Суликовъ 3 р., Շուշան Գեղամեան 5 ր., Մկրտիչ Ռոստոմեանց 3 ր., Գրիգոր Շադինով 5 ր., Սահակ Մինասեանց 2 ր., Անծանօթ 3 ր.։ Գումարն է 78 ր.։

Յովակիմ Ջաթալբաշեանց

երբ դուք ինձ ընդունեցիք և քաջալերելով օգնեցիք ինձ.»

Եթէ ինքն պ. Պապաջանեան զարմանում է որ իրան ընդունում են մի որ և է օրինաւոր տան մէջ, թող չը զարմանայ, եթէ ուրիշները այդ մասին նոյնպէս կը զարմանան….

Պապաջանեան զարմանում է և տպագրութեան մէջ է յայտնում իր զարմանքը, որ նրան դեռ ընդունում են օրինաւոր տան մէջ…

⁂

Ինչքան բաների վրա ուզում էի խօսել՝ մեր թեմական տեսուչների վրա, Ախալցխայի օրիորդաց դպրոցների վրա, պ. Բարխուդարեանի վրա, Թիֆլիսի հրդեհների վրա, թատրոնական կոմիտեի վրա, նոր հիմնուած թարգմանական ընկերութեան վրա, պ. Աղամեանի վրա, իշխան Ամատունու և պ. Յովհաննիսեանի վրա, «Ազգային ջոջեր» գրքի վրա, «Трудъ» լրագրի վրա, Եւանգուլեանի առաջարկութեան վրա զուռնայի մասին…. և այլն։

Բայց բոլորովին ժամանակ չունեմ և տեղը պակասում է։

Կը յիշեմ միայն մի քանի խօսք Եւանգուլեանի մասին։

Քանի մի ժամանակ է որ Թիֆլիսում արգելուած էր զուռնա ածել փողոցներում։ Եւանգուլեանը, որպէս մեր Դումայի ձայնաւոր, այդ մասին բողոքեց…. Բանից յայտնուեցաւ որ պարոնը նախ հաստատ աղբիւրներից իմացաւ որ զուռնան կրկին թոյլ է տրուած նահանգական վարչութիւնից, յետոյ իր բողոքը ներկայացրեց…. Այդ տեսակ բան անուանում են՝ հարսանիքից յետոյ զուռնա։

Այդպիսով մի կողմից հաճելի եղաւ նահանգական վարչութեանը, իսկ միւս կողմից հասարակութեան առջև ցոյց տուեց իրան ազատախօս։

⁂

Այժմեան ժամանակում, ինչքան էլ խօսի մարդը, ինչ բանի վրա էլ խօսի,—վերջը ակամայ վերադառնում է Թիւրքաց հայերի սովատանջ դրութեանը….

«Մշակը» այնքան միամիտ էր, որ հաւատաց այն լուրին, թէ մեր հարուստ Միրզոևը դիտաւորութիւն ունի կէս միլիոն րուբլ փող ընծայելու յօգուտ սովատանջների։ Բացի «Մշակից» ոչ ոք այնքան միամիտ չեղաւ, որ այդ հրէշաւոր լուրին հաւատ ընծայի։ Միայն Դէրբէնդը «Մշակի» պէս միամիտ գտնուեցաւ….

Քանի մի օր սրանից առաջ ստացանք Դէրբէնդի հայ հասարակութիւնից մի հեռագիր հետևեալ բովանդակութեամբ։

«Ճշմարիտ է արդեօք որ Միրզոևը կէս միլիոն է ընծայում յօգուտ սովալլուկների. եթէ ճշմարիտ է, պէտք է արձան կանգնեցնել Միրզոևին.»

Խեղճ դէրբէնդցիներ, ինչքան միամիտ էք դուք…. Դեռ սպասեցէք, մի շտապէք փողեր հաւաքել Միրզոևին արձան կանգնեցնելու համար, դեռ տեսնենք, գուցէ 5 րուբլ էլ չի տայ….

⁂

Վերջացնում եմ ֆելիետոնս տխուր տպաւորութեան տակ….

Այվազովսկի վախճանուեց։ Ո՞վ կը լինի թեմական առաջնորդ։

Դժբաղդաբար Էջմիածինը չէ աշխատում այնպիսի տեղերում ինչպէս Թիֆլիս, Մոսկվա կամ Ս. Պետերբուրգ ուղարկել քիչ շատ լուսաւորուած հոգևորականներին։ Օտարազգի հասարակութեան առջև ամօթով ենք մնում մեր տգէտ հոգևորականներով։

Մեծ պատիւ չէ բերում հայ եկեղեցուն, երբ նրա ներկայացուցիչները Թիֆլիսում կամ Ռուսաստանի եւրոպական նահանգներում տգէտ, անգրագէտ անձինք են….

Այվազովսկի միակ բացառութիւն էր։ Նա ճշմարիտ լուսաւորուած մարդ էր, եւրոպացի էր։ Միթէ դրա տեղը դարձեալ մի տգէտ մարդ պէտք է գայ, ինչպէս են մեր հոգևորականների մեծ մասը։

Երկու համալսարանական մարդ միայն ունի Էջմիածինը՝ Բաստամեանցին և Ստեփանէին,—և նրանց էլ ոչ մի տեղ չէ նշանակում։

Ամենից ցանկալի կը լինէր որ Թիֆլիսի պէս մի տեղում նշանակուէր Խորէն Նար-Բէյ արքեպիսկոպոսի պէս մի քաղաքակիրթ անձնաւորութիւն։

⁂

Այվազովսկու վրա խօսելով չեմ կարող լռութեամբ անցնել որ հանգուցեալը մեռաւ վերջին չքաւորութեան մէջ։ Դա մի հազուագիւտ երևոյթ է մեր եպիսկոպոսների մէջ….Ախար թեմական առաջնորդ լինի մարդը ու մի գեղեցիկ կարողութիւն յետ չը գցի սև օրվայ համար,—ինչ ուզում էք ասէք, մեր եպիսկոպոսների մէջ դա չը տեսնուած բան է։

Հանգուցեալի թաղման ծախսը յանձն են առել հոգալու Թիֆլիսի հայոց կոնսիստորիան և հանգուցեալի ազգականները։

Ասում են թէ դիտաւորութիւն ունէին դիմել Միրզոևին, բայց մտածեցին որ մեղք է դիմել նրան, երբ որ նա արդէն սովալլուկների համար այդքան մեծ գումար էր խոստացել։

⁂

Դարձեալ մի խօսք։

«Մշակի» ներկայ համարում տպվում է Մոսկվայի հայ ուսանողների բողոքը Մելիքզադէի դէմ «Հայ երիտասարդութիւն» յօդուածի պատճառով։

Երիտասարդներ, մի բարեկամական, անկեղծ խորհուրդ եմ տալիս ձեզ։ Մի նմանվէք ձեր պրոտոտիպներին, այն դատարկաշրջիկ, անգործ, նախանձոտ երիտասարդութեանը, որ լցնում է մեր կովկասեան քաղաքները, Պետերբուրգից և Մոսկվայից վերադառնալուց յետոյ։ Մելիքզադէ նրանց անցեալն էր նկարագրել և հաւանական է որ շատ ճիշդ էր նկարագրել, որովհետև նրանց ներկան մենք այստեղ, փառք Աստուծու, տեսնում ենք….

Գուցէ դուք նրանցից լաւ կը լինէք,—տայ Աստուած, դրանից կը շահվի հասարակութիւնը։ Բայց այժմեանից մի ընդունէք նրանց ձևերը…. Ձեր նամակին նայելով, երևում է որ դուք էլ գնալու էք նրանց շաւիղով…Զգոյշ լինէք…. Հաւատացէք իմ խօսքին։ Ես ձեզ հետ խօսում եմ որպէս ձեր բարեկամ, հաւատացէք իմ փորձառութեանը….

Ինչով պէտք է զանազանվէիք մեր այժմեան դարդակ երիտասարդութիւնից, եթէ նոյն յանդուգն, ինքնահաւան ձևերը արդէն այժմից ընդունում էք….

Եթէ Մելիքզադէ բաղդ չէ ունեցել համալսարանի նստարանի վրա նստել,—այդ չէ թոյլ տալիս ձեզ արհամարհանք գցել այն մարդու երեսին, որ արդէն բաւական յայտնի է և յարգելի անուն ունի մեր գրականութեան մէջ։ Դեռ տեսնենք ձեզանից ով կը հասնի նրա հաչակին….Աւելի էլ պատիւ է նրա համար, որ առանց բարձրագոյն ուսման, նա անուն է վաստակել մայրենի գրականութեան մէջ։

Դուք բողոքում էք, բայց այդ ձեր նամակը և նրա յանդուգն ձևերը արդէն ցոյց են տալիս, որ շատ հեռու չէք գնացել ձեր նախորդներից։

Զգոյշ կացէք երիտասարդ բարեկամներ։

«Մշակը» դեռ շատ պառաւ չէ, նա դեռ կը տեսնի ձեզ համալսարանից վերադարձած և հասարակական ասպարէզը մտած։ Ձեզ էլ, եթէ դուք նոյն աններելի ուղղութեանը կը հետևէք, ինչ ուղղութեանը հետևում է մեր այժմեան համալսարանական գործող երիտասարդութիւնը, ձեզ էլ «Մշակը» չի խնայի, հաւատացէք։

Արդէն համալսարանից նոյն վայրիվերոյ, վիրաւորական, յանդուգն, ամեն բան ոտնակոխ անող, ամեն հեղինակութիւն ոչնչացնող ուղղութեամբ մի ընթանաք….

Քիչ համեստութիւն սովորեցէք։

Նրան, ով դեռ սովորում է, ներելի չէ ցեխ գցել այն մարդու երեսին, ով արդէն գործել է և անուն է վաստակել։

Գոնէ ձեր նամակի ձևը, նրա ոճը, նրա մանիէրները չեն ցոյց տալիս, որ մեծ զանազանութիւն լինէր ձեր և նախորդ ուսանողական սերունդի մէջ….

Աստուած տայ որ սխալված լինէի։

ԱՍԻԱՑԻ